Պարոն/Տիկին _____ ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Սաֆարյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա.Սաֆարյան _____

«15» 11 2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի նոյեմբերի 9-ին և 10-ին Ավստրիայի Վիեննա քաղաքում կայանալիք էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) սպառողների պաշտպանության աշխատանքային խմբի հանդիպմանը մասնակցության

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը – Լուսինե Ալեքսանյան

2.Զբաղեցրած պաշտոնը-ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության դիմումների քննարկման բաժնի գլխավոր մասնագետ

3.Գործուղման վայրը և ժամկետները – Ավստրիա, Վիեննա, 2023 թվականի նոյեմբերի 8-11-ը

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում) – էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիա (ERRA)

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը) - էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) սպառողների պաշտպանության աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը մասնակցություն

6.Քննարկված թեմաները (հարցերը)

- էներգետիկայի բնագավառում սպառողների պաշտպանությանն առնչվող՝ երկրների վերջին նորությունները/փոփոխությունները

- Էներգետիկ շուկաներում նոր երևույթների (ինքնավար էներգարտադրողներ, էներգետիկ համայնքներ և այլն), սպառողների և կարգավորողների համար դրանց հնարավոր հետևանքների մասին զեկույց
- Էներգետիկայի կարգավորման մարմինների դերը փակ բաշխման համակարգերում
- Դինամիկ գնային պայմանագրերը
- Սպառողների պաշտպանության համատեքստում դիմում-բողոքների քննարկումը
- Էներգետիկ ճգնաժամի լույսի ներքո սպառողների վեճերի լուծումը
- Խմբի աշխատանքային պլանի (2024-2026թթ) կազմում

09.11.2023թ

Աշխատանքային խմբի հանդիպման ժամանակ քննարկվեցին էներգետիկայի բնագավառում սպառողների պաշտպանությանն առնչվող՝ երկրների վերջին նորությունները/փոփոխությունները: Յուրաքանչյուր երկրի ներկայացուցիչ ելույթի միջոցով ներկայացրեց իր երկրի փորձը. էներգետիկայի բնագավառի օրենսդրական փոփոխությունները, սպառողների ընդգրկվածությունը էներգետիկ շուկաներում, երկրների կարգավորող մարմինների դերը և գործառույթները: Քննարկվեցին նաև էներգետիկ համակարգում սպասվելիք և նախատեսվող բարեփոխումները, որոնք ուղղված են լինելու սպառողների պաշտպանության բարձրացմանը,ազատ շուկայում մատակարար-սպառող հարաբերությունների կարգավորմանը: Կլոր սեղան քննարկումներն հնարավորություն տվեցին հարցերի ու պատասխանների միջոցով ստանալ լրացուցիչ տեղեկություններ, երկրների օրինակների ներկայացման հիման վրա ավելի ամրապնդել ձեռք բերված տեղեկատվությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև էներգետիկ շուկաներում նոր երևույթների (ինքնավար էներգարտադրողներ, էներգետիկ համայնքներ և այլն), սպառողների և կարգավորողների համար դրանց հնարավոր հետևանքների մասին զեկույցի պատրաստման նպատակով իրականացված ուսումնասիրության/հետազոտության նախնական վերլուծական արդյունքները: Վերլուծական խմբի անդամները ներկայացրեցին իրենց կողմից կատարված և կատարվելիք աշխատանքները՝ ուղղված վերլուծական զեկույցը վերջնական տեսքի բերելուն և հրապարակմանը: Մասնակից պետությունների ներկայացուցիչներին հարց ու պատասխանի միջոցով հնարավորություն տրվեց կատարելու հարցման ընթացքում տրամադրված տեղեկատվության հստակեցում և լրացումներ:

Քննարկման հաջորդ թեման եղել է «Էներգետիկայի կարգավորման մարմինների դերը փակ բաշխման համակարգերում»: Էստոնիայի, Հունգարիայի և Մոլդովայի ներկայացուցիչները ելույթներով ներկայացրեցին իրենց երկրի փորձը, իսկ մյուս մասնակիցներին հնարավորություն տրվեց ելույթներից հետո քննարկման ընթացքում ներկայացնել նաև իրենց երկրի փորձը:

10.11.2023թ

Հանդիպման ընթացքում քննարկվել է էներգետիկայի բնագավառում սպառողներին էլեկտրաէներգիայի և գազի մատակարարման դինամիկ գնային պայմանագրերի կիրառելիությունը, դրանց արդյունավետությունը և հետևանքները, նման պայմանագրերի բացակայության դեպքում՝ համակարգում կիրառվող մատակարարման պայմանագրերի այլ ձևերի առավելությունները և սահմանափակումները:

Քննարկման հաջորդ թեման եղել է «Սպառողների պաշտպանության համատեքստում դիմում-բողոքների քննարկումը»: Հայաստանի և Ռումինիայի ներկայացուցիչները իրենց ելույթների միջոցով ներկայացրեցին երկրների փորձը, մասնավորապես՝ կարգավորող մարմինների կողմից դիմում-բողոքների ընդունման/մուտքագրման, քննարկման և դիմում-բողոքներին պատասխանելու ընթացակարգերը, ժամկետները դիմումատուների հետ տարվող աշխատանքները, ինչպես նաև դիմումների օպերատիվ արձագանքնմանն ողղված մեխանիզմների զարգացմանն ուղղված քայլերը: Ելույթներից հետո ակտիվ քննարկումները հնարավորություն տվեցին նաև մյուս մասնակիցներին կիսելու իրենց երկրների փորձը, որոշակի իրավիճակներում օրինակների ներկայացմամբ համեմատելու և դուրս բերելու առանձնահատկությունները:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև սպառողների՝ էներգետիկ շուկայում մյուս անդամների (մատակարար, բաշխող և այլն) հետ ունեցած վեճերի լուծման գործընթացները, դրանցում կարգավորող մարմինների դերը, առկա խնդիրները, ինչպես նաև վեճերի կարգավորման գործընթացների կատարելագործմանն ուղղված ակնկալվող փոփոխությունները:

Հանդիպման վերջում քննարկվել է նաև աշխատանքային խմբի առաջիկա և հաջորդ տարիների (2024-2026) աշխատանքային պլանը. առանձնացվել են խմբի հանդիպումների համար նոր թեմաներ, որոնց անհրաժեշտությունն առաջ եկավ քննարկումների արդյունքում:

7.Հանդիպումները, ելույթները.

Երկօրյա հանդիպման ընթացքում ելույթ եմ ունեցել հետևյալ թեմաներով՝

1. *«Էներգետիկայի բնագավառում սպառողների պաշտպանությանն առնչվող՝ երկրների վերջին նորությունները/փոփոխությունները»*

Ներկայացվել են Հայաստանի էներգետիկ համակարգում վերջին փոփոխությունները, մասնավորապես՝ էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում, օրենսդրական փոփոխությունները, վերականգնվող էներգետիկայի զարգացման միտումները, այդ թվում՝ ինքնավար էլեկտրաէներգիայի արտադրությունը, ինչպես նաև համակարգում պլանավորված և սպասվելիք բարեփոխումները:

2. *«Դինամիկ գնային պայմանագրերը/ էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրեր»*

Ներկայացվել են էլեկտրաէներգետիկական շուկայում սպառողին էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրերի տեսակները, դրանց կիրառման իրավական հիմքերն ու պայմանները:

3. *«Սպառողների դիմում-բողոքների քննարկումը՝ որպես սպառողների պաշտպանության ուղղություն»*

Ներկայացվել են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում սպառողների և քաղաքացիների դիմում-բողոքների ներկայացման ձևերը/ուղիները, մուտքագրման ընթացակարգը, դիմում-բողոքների քննարկման և պատասխանման ընթացքն ու ժամկետները, ինչպես նաև սպառողների իրազեկվածության բարձրացման նպատակով կիրառվող մեխանիզմները, դիմում-բողոքների թվի վերաբերյալ տարեկան տեղեկատվությունը:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Երկրների միջև համագործակցությունը պահպանելու, երկրներում տեղի ունեցող փոփոխություններին, զարգացումներին ծանոթանալու, ինչպես նաև արդյունավետ փորձերի փոխանակման համար ձեռք է բերվել պայմանավորվածություն կապը պահպանել նաև էլեկտրոնային տարբերակով՝ նյութերի փոխանակման նպատակով: Հանդիպման արդյունքում որոշում է կայացվել հաջորդ հանդիպման օրվա, տեղի վերաբերյալ, առանձնացվեցին քննարկման համար նախնական թեմաները: 2024-2026թթ աշխատանքային պլանի քննարկման արդյունքում որոշվել է, որ առաջիկա շաբաթվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով խմբի մասնակիցները կուղարկեն հանդիպումների թեմաներն իրենց համառոտ նկարագրությամբ:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները-

Երկօրյա արդյունավետ քննարկումների արդյունքում առաջարկվել է ֆիզիկական հանդիպումներն ավելի հաճախ կազմակերպել, քանի որ նման հանդիպումների դեպքում մասնակիցների ընդգրկվածությունը քննարկումներին ավելի արդյունավետ է լինում:

Գործուղվող ---------- 15.11.2023թ ----------

(սպորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն

որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 865-ԳՔ, 04.10.2023թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Լուսինե Ալեքսանյան, ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության դիմումների քննարկման բաժնի գլխավոր մասնագետ

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը Վիեննա /Ավստրիա/

5. Գործուղման ժամկետները 08.11.2023-11.11.2023թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

Օրապահիկ, ճանապարհածախս, գիշերավարձ,մուտքի արտոնագիր

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Լուսինե Ալեքսանյան*	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	173,333	173.3
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	111	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	44,070.67	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	132,212	132.2
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	141	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	62,079.48	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	248,318	248.3
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար	33,560	33.6
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		587.42	587.42

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 13.11.2023թ.